## ՉԱՂԵԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ



Գերեզմանոցի մուտքը

**Տեղադրություն.** գտնվում է քաղաքի արևելյան եզրին՝ Հաուշ Ալ-Չարանեի շրջանում: Տեղադրությունն է՝ N 33° 50' 33.25", E 35° 54' 25.72":

**Պատմություն.** Չահլեում հայերը բնակություն են հաստատել 1920-ական թվականների սկզբներին<sup>4</sup>:

Գերեզմանատան քրիստոնեական հատվածում գտնվող հայկական բաժինը հավանաբար սկզբնավորվել է նույն ժամանակաշրջանում: Պահպանված ամենահին արձանագիր տապանաքարը վերաբերում է 1926 թ.:

**Արձանագրություններ.** գերեզմանատանը կա հայերին պատկանող մոտ 36 արձանագիր տապանաքար: Ներկայացնում ենք նյութին առնչվող 9 միավոր: Դրանք հրատարակվում են առաջին անգամ:


### Ա

Տիկ(ին) Էլիզ Լ. Փամպուզեան՝ / ծնեալ Աշրգեան, / **Ատանա**, / 1900 մայիս 16, / մեռեալ Չահլե, / 1926 հոկտ(եմբեր) 22: / Յիշատակն արդարոց / օրհնութեամբն եղիցի:

### Բ

Մելքոն Նուխտեան, / ծնաւ 1910, / մնջեց 1973.3.15, / **զէթունցի**: / ملكون نوخوديان

4 «Հայաստանի կոչնակ», 1923, № 14, էջ 440:



### Գ

Դամբարան / Պախղիարեան ընտանիքի: / Աստ հանգչին / Յակոբ Պախղիարեան, / ծն(եալ) **Կեսարիա**, 1870-1939, / Հայկուհի Պախղիարեան՝ / ծն(եալ) Բաստրըմաճեան, / **Կեսարիա**, 1896-1968, / Չահլե:

### Դ

Աստ / հանգչի / Ավետիք Տեօվլեթեան ընտանիք՝ / Ա., 1939, Յար., 1957, Վեր., 1960: **Միս**:

### Ե

Աստ հանգչի / հաճի Յարութին / Թերզիեան, / ծն(եալ) **Տէնեսե**, 1881, / հանգ(եալ) 1957: / Դամբարան / Թերզիեան / ընտանիզի, Չահլե:

**Չ**

Աստ / հանգչի / Թումա / Շենյուկեան, / ծն(եալ) 1894, / **Տիգրանակերտ**, / վախ(ճանեալ) 1966: / Աստ / հանգչի / Օղիտա / Ջալզավատճեան, / ծն(եալ) 1885, / **Տիգրանակերտ**, / վախ(ճանեալ) 1959:



**Ը**

Աստ հանգչի / Յարութիւն / Դասլագճեան, / ծնեալ / **Կեսարիա**, 1897, / մահաձայ / Չահլէ, 1973:



**Է**

Դամբարան. / Պետրոս Ֆերմանեան, / ծնեալ Սիս, / Չարուհի Ֆերմանեան, / ծնեալ **Սիս**, 1909-1970, / Յակոբ Ֆերմանեան, / ծնեալ **Սիս**, 1890-1975:



**Թ**

Յակոբ Յ. / Լիլիճեան, / ծն(եալ) 1862(?), / **առանցի**, / հան... 19...:



## ՂԱԶԻՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ



Պատված գերեզմանատնից

**Տեղադրություն.** գտնվում է գյուղի հարավային եզրին: Տեղադրությունն է՝ N 34° 00' 51.97", E 35° 39' 50.76":

**Պատմություն.** Ղազիրում հայերը հաստատվել են 1920-ական թվականների սկզբին: 1929 թ. այստեղ բնակվում էր 30-40 տուն, հիմնականում՝ հաճնցի և ուրֆացի վերապրած հայ ընտանիքներ<sup>5</sup>:

Գերեզմանոցի սկզբնավորման թվականը հայտնի չէ: Այստեղ պահպանված ամենահին արձանագիր տապանաքարերը պատկանում են 1976-1978 թթ.:

**Արձանագրություններ.** 20 գերեզմաններից արձանագիր են 13-ը: Ներկայացնում ենք նյութին առնչվող 2 միավոր: Դրանք հրատարակվում են առաջին անգամ:



### Ա

*Յարութիւն Բէճէպեան, | Հաճըն, | 1895-1977: | Տիգրանուհի Բէճէպեան-Շարոյեան, Էրզրում, | 1905-1976:*

### Բ

*Մարիամ Կիրիլեքեան, | ծնեալ Հաճըն, | 1900-1978:*



<sup>5</sup> «Ազդակ», 1 մայիս, 1929:



## ՋՅՈՒՆԻԻ ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ



Դատված գերեզմանատնից

**Տեղադրություն.** գտնվում է քաղաքի հարավարևելյան եզրին՝ Սբ. Հարություն եկեղեցուց 600 մ հարավ-արևմուտք: Տեղադրությունն է՝ N 33° 58' 27.84", E 35° 37' 48.30":

**Պատմություն.** հավանաբար սկզբնավորվել է 1920-ական թվականների սկզբին, երբ ցեղասպանությունը վերապրածների մի մասը բնակություն է հաստատել քաղաքում<sup>6</sup>:

Գերեզմանոցի 2900 մ<sup>2</sup> հողատարածքը հայ համայնքին է տրամադրվել Ջյունիի քաղաքապետարանի կողմից:

**Արձանագրություններ.** 135 գերեզմաններից արձանագիր են 96-ը: Ներկայացնում ենք նյութին առնչվող 14 միավոր: Դրանք հրատարակվում են առաջին անգամ:

### Ա

Աստ հանգչի / Մ. Մյսճեան, / ծնաւ 1856, / **Էվերէկ**, / մեռաւ 1924:

### Բ

Աստ հանգչի / Կիլ Մյսճեան, / ծնաւ 1862, / **Էվերէկ**, / մեռաւ 1926:

<sup>6</sup> Պատմական համառոտ ակնարկ՝ Ժունիի Ս. Յարություն եկեղեցույ (1921-2010), Պէյրուք, 2012:



### Գ

Աստ հանգչի / Թագուհի Յ. / Խըրըտեան, / ծն(եալ) **Կիրին**, 1868-1926:

### Դ


Աստ հանգչի / **հաճրնցի** / Միսակ Գաժեան, / ծնեալ ի **Հաճրն**, 1877, / հանգեալ ի Դիւնի, / յամի տ(եառ)ն 1-5-1927: / Misak Ka...

**Ե**

Խանրճ Գազանճեան, | **այնթապցի**, | 1858-1933:

**Զ**

Սօրոմօն Կարապետեան, | **Ինճեաու**, | ... 1911, մէրած 1935(°):



**Է**

Աստ հանգչի | օր(իորդ) Պէաթրիս Տէր-Սարգիսեան, | ծ(նեալ) **Այնթապ**, 1907-1937: | Հալէպի Կրթասիրաց | վարժարանին աշակերտ/ները կը կանգնեն այս | տապանը՝ ի յիշատակ իր/ենց վաստակատր մանկապարտէգուհոյն: | Օրինեալ ըլլայ իր յիշատակը: | *بياطريس دير/سرکيسيان*

**Ը**

Աստ | հանգչի | Արմենակ Աբանեան, | ծն(ն)եալ | **Էքրէկ**, | 1897-1963, | Ծիւնի:



**Թ**

Աստ հանգչի | Լուսնբազ Գալա(յ)եան, | ծն(եալ) **Կեմերէկ**, 1902-1971:

**Ժ**

Դամբարան | Սանկունի-Սրապեան(ների): | Աստ հանգչին | ամերիկահայ գրագէտ | Նազարէթ Սանկունի, | ծնեալ **Բալու-Հաաա**, 1884-[1972], | Վրէժ Սրապեան, | ծնեալ **Խարրերդ-Սեզրէ**, 1921(°) ...:

Ծանօթ. Նազարէթ Սանկունու մասին տես **Հովակիմյան Բ.**, նշվ. աշխ, էջ 660:

**ԺԱ**

Աստ հանգչի | Ռաֆֆի Տիքիճեան, | ծն(աւ) **Խարրերդ**, 1914, մեռ(աւ) 1979: | Դամբարան | Տիքիճեան ընտանիքի՝ | Էօժենի Տիքիճեան, | 1924-2002:

**ԺԲ**

Աստ հանգչի ի տէր | Սկրտիչ Փանոսեան, | **Կուկիսան**, 1900, Անթիլիաս, 1987: | Հռիփսիմէ Փանոսեան, | Հալէպ, 1931, Տպայէ, 1995:



**ԺԳ**

Դամբարան | Մելիքսեթեան ընտանիքի: | Շուշան Մելիքսեթեան-Թեոզեան, ծն(աւ) 1919, **Քիլիս**, | մեռ(աւ) 1988, Պէյրութ, | Յարութիւն Գ. Մելիքսեթեան, | ծն(աւ) 1911, **Քիլիս**, մեռ(աւ) 1991:

**ԺԴ**

Խանրճ Մալխասեան, | ծն(եալ) **Ուրֆա**:



### ՍԱՅԴԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳԵՐԵԶՍԱՆԱՏՈՒՆ



Դատված գերեզմանատան հայկական բաժնից

**Տեղադրություն.** գտնվում է քաղաքի արևելյան եզրին՝ Հարաթ Սալդայի շրջանում: Տեղադրությունն է՝ N 33° 33' 26.91", E 35° 23' 01.85":

**Պատմություն.** Սալդայում հայերը հաստատվել են 1920-ական թվականների կեսերին<sup>7</sup>: 1928 թ. այստեղ բնակվում էր 25 տուն<sup>8</sup>:

Քրիստոնեական գերեզմանատան հայկական բաժնի սկզբնավորման թվականը հայտնի չէ: Պահպանված ամենահին արձանագիր տապանաքարը վերաբերում է 1949 թ.:

**Արձանագրություններ.** գերեզմանատանը կա հայերին պատկանող 4 արձանագիր տապանաքար: Ներկայացնում ենք նյութին առնչվող 2 միավոր: Դրանք հրատարակվում են առաջին անգամ:

#### Ա

Աստ հանգչի | Գեորգ Հատեճեան, | ծնեալ | Ագ-  
շեհի, 6.7.1890, | մերեալ | Սալտա, 9.8.1949:  
Ծանոթ. նրա մասին տես «Ազդակ», 14 ապրիլ, 1962:

7 «Ազդակ», 31 մայիս, 1928:

8 Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Գ, էջ 542:

#### Բ

Դամբարան | Թղլրեան ընտանիք(ի) | Իգնատիոս Թղլրեան, | ծն(եալ) 1887, **Տոթթեօլ**, | հանգ(եալ) 1964:

Ծանոթ. նրա մասին տես «Ազդակ», 14 ապրիլ, 1962:



## ՏՐԻՊՈԼԻԻ ԳԵՐԵԶՍԱՆԱՏՈՒՆ



Պատված գերեզմանատանից

**Տեղադրություն.** գտնվում է Ալ-Սիմայի շրջանի հարավարևմտյան եզրին: Տեղադրությունն է՝ N 34° 26' 43.81", E 35° 48' 51.81":

**Պատմություն.** գերեզմանատունը հավանաբար սկզբնավորվել է 1920-ական թվականների սկզբին, երբ ցեղասպանությունը վերապրածների մի մասը բնակություն է հաստատել քաղաքում<sup>9</sup>:

Պահպանված ամենահին արձանագիր տապանաքարը պատկանում է 1925 թ.:

**Արձանագրություններ.** 105 գերեզմաններից արձանագիր են 74-ը: Ներկայացնում ենք նյութին առնչվող 13 միավոր: Դրանք հրատարակվում են առաջին անգամ:

### Ա

*Ընթերցող, | վախցիդ Բ մահէն եւ հոս չեկած՝ | ապաշխարէ: Կարապետ, Շուշան: | Աստ հանգչի սիսցի | Աբրահամ Ֆարաճեան, 1907-1928, | և յիշատակը անոր քրոջ՝ Մարիամի, | Վարդուհի, Սիրանուշ եւ Սեւկիւլի, | հանգիստ իրենց ոսկորներուն:*

### Բ

*Աստ հանգչի | տ(ի)կ(ի)ն Ծաղիկ | Պէօճիկեան, | ծն(եալ) Կիւրիան, 1880-19[4]5(°), Թրիփօլի:*



### Գ

*Շիրիմ [դա]մբարան | Մազլումեան ընտանիքի: | Տօքթոր) Կարապետ Մազլումեան, | ծն(եալ) Ազգեհիր, 1869-1953:*

### Դ

*Ամ. Ղատեան, | հաճընցի, | 1878-1953: | Աստ հանգչի ի տէր | Մարիյամ Միզա(յ)էլեան, | ծն(եալ) 1922, ն(մ)ջ(եալ) 1983:*

### Ե

*Շիրիմ դամբարան | Ղազարեան եւ Յովնանեան | ընտանիքների: | Մահտեսի Մարտիրոս Ե. Ղազարեան, | ծն(ալ) 1887, Եօղատ, մեռ(ալ) 1953:*

<sup>9</sup> Հայ Սփյուռք հանրագիտարան, հ. 1, Երևան, 2003, էջ 296:

**Չ**

Աստ հանգչի / Լեւոն Մ. Նարայէյեան, / 1888-1953, / ծննդալ **Տէրէնաւ**, Թուրքիա: / لیون سعاتي.




**Է**

Շիրիմ դամբարան / Տաուտեան ընտանիքի: / Մահտեսի Փիրուզ Ե. Տաուտեան, / ծն(աւ) 1889 Շիւշիրեան ի **Կեսարիա**, / մեռ(աւ) 1953 11 հոկտ(եմբեր):

**Ը**

Շիրիմ դամբարան / Համբարեան ընտանիքի, / **Կարնեցի**: / Աննա կողակից նահատակ 1915 / մահտեսի Սարգիս Համբարեանի, / ծն(եալ) Ապաճեան, 1873, / մեռ(աւ) 1953 հոկտ(եմբեր) 28:



**Թ**

Դամբարան / Թելեան ընտանիքի: / Աստ հանգչին / Յովհաննէս Թելեան, / ծ(նեալ) **Կեսարիա**, 1895-1955, Թրիփոլի, / Սաթենիկ Թելեան, / ծ(նեալ) Թրիփոլի, 1943(°)-1975, Պէյրուք, / Ռուբէն Թելեան, / ծ(նեալ) Դամասկոս, 1924(°)-1977, Թրիփոլի:

**Ժ**

Դամբարան / Գեորգեան / ընտանիք(ի): / Յովսէփ Գեորգեան, / 1895-1956, / **Ուրֆա**: / «Երանելի են այն մեռելները, / որոնք տէրոջնով կը ննջեն»: / Յայտն(ութիւն) 14. 13:

Ծանոթ. նրա մասին տե՛ս **Մահակեան Ա.**, նշվ. աշխ., յատկաւ. ուրֆացիներու մարդահամարը էջ 44:

**ԺԱ**

Յակոբ Կարապետեան, / ծնած 1909, **Միս**, 1961:

**ԺԲ**

Ազդ / հանգչի / տ(օք)թ(որ) Միհրան Պահատրեան, / ծընեալ **Հաճըն**, / 1900-1963:

**ԺԳ**

Սկրտիչ Կիլիպեան, / 1889-1965, / որ որը կադօթէր 6 ժամ, / ծնեալ **Ճիճիւն**, **Կեսարիա**: / Ապաշխարեցէ՛ք հոս չեկած:



## ՖԸՐՆ ԱԼ ՇՐԲԵՔԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ



Պատված գերեզմանատանից

**Տեղադրություն.** գտնվում է Ֆըրն ալ Շըքքեթի շրջանի հյուսիսում՝ Նասրայի շրջանում: Տեղադրությունն է՝ N 33° 52' 59.49", E 35° 30' 52.02":

**Պատմություն.** գերեզմանատունը սկզբնավորվել է 1920-ական թթ., երբ Բեյրութի քաղաքապետարանը քաղաքի կենտրոնում գտնվող հայկական փողոցի գերեզմանոցում<sup>10</sup> խճողում չառաջացնելու նպատակով արգելեց թաղումներ կատարել այդ տեղ. «Արգիլեց, բայց թաղելու տեղ ցոյց չտուաւ: Պէտք էր տեղ մը գտնել: Իսկ դրա՞մը: Հայը արդէն հիւժած, կմախքացած ու տկար կը մեռնէր, չէր դիմանար անօրութեան եւ հիւանդութեանց: Ատեն մը յոյն-օրթոտոքս համայնքը, իբր քոյր եկեղեցի, տրամադրեց իր գերեզմանատունը, բայց այնքա՛ն շատ մեռելներու առաջ, տեսնելով, որ գերեզմանատունը պիտի լեցուի, արգիլեց: Պէտք չէր հայը թաղել, բայց ի՞նչ ընել ... Կաթողիկոսը հրապարակեց կոնդակ մը՝ Ափ մը հող: Այդ կոնդակով վեհափառը կը խնդրէ

Լիբանանի եւ արտասահմանի ունեւոր հայերէն, որ մեր մեռելները թաղելու համար հող մը գտնեն»<sup>11</sup>:

1923 թ. Երուսաղեմի պատրիարքարանը գնում է գերեզմանոցի հողը<sup>12</sup>:

1927 թ. նոր գերեզմանատան տարածքին կցվում է ևս 3700 մ<sup>2</sup> հողաշերտ<sup>13</sup>:

**Արձանագրություններ.** 1250 գերեզմաններից արձանագիր են 1175-ը: Ներկայացնում ենք նյութին առնչվող 504 միավոր: Դրանք հրատարակվում են առաջին անգամ:

### Ա

*Աստ հանգչին | Պօղոս Տերտերեան, | ծն(եալ) Սեբաստեա, 1874, հ(ա)նգ(եալ) 1915, | Սաբենիկ Գումրեան, 1904-1941, | Արշալոյս, 1938-1953, | փողոցիկն Ասատուր Գումրեան:*

### Բ

*Մահ(տեսի) Մէլքոն Հազարապետեան, | ծնեալ 1842-ին ի Տարեմտէ, Կիլիկիա, | հանգեալ ի տէր*

<sup>10</sup> Գտնվում էր Մուղավար թաղամասում՝ Սբ. Նշան եկեղեցուն կից՝ այժմյան Խերյան ազգապատկան կալվածքի տեղում: Սկզբնավորվել էր 1845 թվականից հետո: 1934 թ. այստեղ գտնվող տապանաքարերը տեղափոխվել են Ֆըրն ալ Շըքքեթի հայ առաքելական գերեզմանատուն, իսկ հանգուցյալների աճյունները՝ վերահուղարկվողովել նույն գերեզմանատանը (**Վարժապետեան Ս.**, Հայերը Լիբանանի մէջ, հ. Ա, Պէյրութ, 1951, էջ 266):

<sup>11</sup> «Ազգակ» բացառիկ, 1952, էջ 69:

<sup>12</sup> **Տէմիրճեան Վ.**, Գաղազնագիրը Լիբանանի և Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, հ. Ա, Անթիլիաս, 1980, էջ 82-83:

<sup>13</sup> **Վարժապետեան Ս.**, Հայերը Լիբանանի մէջ, հ. Բ, Պէյրութ, 1981, էջ 235:



1916 մայիս 29, | տարագրութեան միջոցին ի Ապու-  
հարիր՝ | Եփրատ գետի եզերքը: | Գոհար՝ կողակից  
Մ. Հազարապետեանի, | ծնեալ 1851-ին ի **Տաքեանտ**,  
| հանգեալ ի տէր 1927 օգոստոս) 24, Պէյրութ: | Մէլ-  
քոն Նշան | Հազարապետեան, | 1911-1994:

**Գ**

Դամբարան | Ծղնատրեան ընտանիքի: | Աստ  
հանգչին | Յակոբ Ծղնատրեան, | ծնե(ա)լ 1859,  
հ(ա)նգ(եալ) 1916, Բէմդա, Հաւրան, | Նորիցա  
Ծղնատրեան, | ծնե(ա)լ 1878, ի **Էֆթէրէ**, **Կեսարիա**,  
| հ(ա)նգ(եալ) 1933, ի Պէյրութ, | Արամ Ծղնատ-  
րեան, | 1897-1970, | Յակոբ Ծղնատրեան, | 1930-  
1979, | Վեհանուշ Ծղնատրեան, | 1907-1995, |  
Հրայր Ծղնատրեան, | 1932-2010:

**Դ**

Դամբարան | Ապաճեան ընտանիքի: | Աստ  
հանգչին | Յարութիւն Ապաճեան, | 1859-1916, | Հէր-  
մինէ Ապաճեան, | 1907-1947, | Նազելի Ապաճեան,  
| 1873-1964, | Անժել Ապաճեան, | 1911-1972, | Կա-  
րապետ Ապաճեան, | ծն(եալ) **Ագասարայ**, 1897-1985,  
| Արշակ Ապաճեան, | ծն(եալ) **Ագասարայ**, 1906-1987,  
| Գէորգ Գէորգեան, | 1894-1956:



**Ե**

Յուշարձան | գերդաստանի նահատակներուն: |  
Տէր Աւետիք քահանայ, **Այնթապ**, 1848-1909, **Տօր-  
թեօլ**, | որդին՝ Միհրան (ծն. **Այնթապ**), 1886-1920,  
գոհ կռուի: | Տէր Յարութիւն քահանայ (ծն. **Այն-  
թապ**), 1865, | երեցկիւնը՝ Մարիամ (ծն. **Այնթապ**),  
1870, | զաւակները՝ Մէրիյէ (ծն. **Այնթապ**), 1900, | Ե-  
զինէ (ծն. **Այնթապ**), 1903, | Ներսէս (ծն. **Այնթապ**),

1907, | զոներ Մեծ եղեռնի | ի Տէր-Չօր | 1916-ին, |  
Յակոբ (ծն. **Այնթապ**), 1898, կախուած 1916-ին: |  
Աստ հանգչին | երեցկիւն տէր Աւետիսի, | **Քիլիս**,  
1858-1937, | հաճի Ֆլօրէնցա, | **Այնթապ**, 1868-1957,  
| Մելքոն Տէր-Մելքոնեան, | **Այնթապ**, 1894-1959, |  
Յակոբ Տէր-Մելքոնեան, | **Այնթապ**, 1879-1972, | Ու-  
սաննա Տէր-Մելքոնեան, | **Այնթապ**, 1889-1982, |  
Վարդան Տէր-Մելքոնեան, | Պէյրութ, 1931-1991:

Ծանոթ. Հակոբ Տէր-Մելքոնյանների մասին տես «Հայկա-  
զեան հայագիտական հանդէս», հ. Գ, Պէյրութ, 1972, էջ 318:  
**Վարժապետեան Մ.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 445-448:

Մելքոն Տէր-Մելքոնյանների մասին տես նշվ. աշխ., էջ 448-  
449:

**Զ**

Դամբարան | Քիրքճ(ի)եան եւ Արապեան ըն-  
տանիք(ներ)ի: | Գէորգ Ա. Քիրքճիւեան, | 1855-1921,  
| **Ազէհիք**: | Աստ ննջէ(ն) | Գէորգ Ա. Քիրքճիւեան, |  
1937-1938, | Պէյրութ, | Աբրահամ Գ. Քիրքճիւեան, |  
ծն(եալ) **Ազէհիք**, 1895-1941, | Պէյրութ, | Զարուհի  
Գ. Քիրքճիւեան, | ծն(եալ) **Ազէհիք**, 1907-1946, |  
Պէյրութ, | Լուսին Ա. Քիրքճ(ի)եան, | թանկագին  
զոհ | Պհամտունի աղետին, | 1960 ապրիլ 1-ի, |  
ծն(եալ) Պէյրութ, 1936:



**Է**

Աստ | հանգչին | Բէնիսամին, Ռեբեկա Աճէմեան-  
(ներ), | 1870-1923, 1885-1956, | ծն(եալ) | **Եօզկատ**:

**Ը**

Աստ հանգչի | Յակոբ Չերքէզե(ա)ն, | ծ(նեալ) ի  
**Կեսարեա**, | 1907-1923:



**Թ**

Մամա Գ. [Թ]ի.ֆէնկճեան ընտանիք(ի) | Աստ հանգչի(ն) | Նուպար Թի.ֆէնկճեան, | ծնեալ օգոստոս 7 1918, | հ(ա)նգ(եալ) մարտ 10 1923, | Կարապետ Գարբազճեան, | ծն(եալ) **Կեսարիա**, 1860, | հ(ա)նգ(եալ) 13 մարտ 1935:

**Ժ**

Դամբարան Չարդարեան | ընտանիքի, | **խարքերդի**: | Պետրոս Չարդարեան, | 1914-1925, | Մարտիրոս (Չարդարեան), | 1916-1933, | Պաղտասար Չարդարե(ա)ն, | 1889-1944:



**ԺԱ**

Դամբարան | Կարապետ Յ. Քացախեան ընտանիքի: | Թագուհի Յ. Քացախեան, | ծն(եալ) **Կեսարիա**, 1851, հ(ա)նգ(եալ) 1926, Պէյրութ, | Յարութիւն Կ. Քացախեան, | E.C.P., 1939, | ճարտարապետ վկայեալ Էբոլ Սանթրալէն, | ծն(եալ) **Կեսարիա**, 1913, հ(ա)նգ(եալ) 1948, Փարիզ, | Արտաշէս Քացախեան, | ծն(եալ) **Կեսարիա**, 1920-1987, | ... | ...:

Ճանոթ. Կարապետ Քացախեանը ծնվել է (1879-1957) Կեսարիայում (մանրամասն տե՛ս **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 492):

**ԺԲ**

Աստ հանգչի(ն) | Կարապետ Օհանեան, | ծնեալ | 23 փետր(ուար) 1853, | **Կեսարիա**, | հանգեալ | 9 օգոստոս 1926, | Պէյրութ, | Նիրզա Օհանե(ա)ն, | ծն(եալ) 1860 օգոստոս 26, | հանգ(եալ) 1945 յուլիս 30, Պէյրութ):



**ԺԳ**

Դամբարան | Կ. Դաւիթեան ընտանիքի: | Աստ հանգչին | Կարապետ Դաւիթեան, | ծն(եալ) **Մալա-**

**թիա**, 1859-1926, | Վարդեր Դաւիթեան, 1871-1950, | Մարգիս Կ. Դաւիթեան, 1897-1965, | Մարիամ Դաւիթեան, 1906-1973, | Գրիգոր Կ. Դաւիթեան, 1906-1975, | Կարայիս Ս. Դաւիթեան, 1931-2004, | Հայկուհի Գ. Դաւիթեան, 1920-2005:

**ԺԴ**

Դամբարան Պաթա(յ)եան | ընտանիքի: | Սուրբուհի Պաթա(յ)ե(ա)ն, | ծն(եալ) **Կեսարիա**, 1878, | հ(ա)նգ(եալ) Պէյրութ, 1926, | Բարսեղ Պաթա(յ)եան, | ծն(եալ) **Կեսարիա**, 1902-1974, | Յակոբ Պաթա(յ)եան, | 1942-1949, | Նուէր | Պաթայեան, | 1908-1992, | Աբրահամ | Պաթայեան, | 1935-2006:

**ԺԵ**

Կիրակոս Էշիշեան, | ծնեալ 1918 օգոստոս 13, | հանգեալ 1947 մարտ 10: | Երկինք մը խոց սրտին մէջ, | ունայնութիւն ծամէլէն, | գոց աչքերով մոլորուն, | մեծ ոչինչին զինք տարին: | Աստ հանգչի | **Ամանոսի** | հայ մտատրականը՝ | Պետրոս Յովհաննէսեան, | ծնեալ յամի տիստն 1894(°), | վախճանեալ 1926 օգոստոս 10-ին:

**ԺԶ**

Դամբարան | Ամատունի ընտանիքի: | Աստ հանգչի(ն) | Լեւոն՝ | որդի Համբարձում | Ամատունիի, | ծն(ալ) ի Պէյրութ, 1900, | հանգեալ ի տէր 1926, | որդի Համբարձում | Ամատունիի՝ | տօգ(թոր) Չարէի | Ամատունի, | ծն(եալ) **Եռզրատ**, 1881, | հ(ա)նգ(եալ) ի Պէյր(ու)թ, 1935:

Ճանոթ. Չարէի Ամատունու մասին տե՛ս **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 34:



**ԺԷ**

Աստ հանգչի(ն) | Միհրան Շեքերճեան, | ծն(եալ) 1864 մարտ 18, | հ(ա)նգ(եալ) 1927 յո(ւն)վ(ա)ր 14, | Մարտիրոս Շեքերճեան, | 1903-1969, | Ֆիլիօր Բամպուրեան, | 1863-1944, | Մանուշակ Շեքերճեան, | 1880-1962, | Սարգիս Շեքերճեան, | 1901-1981, | Աբրիհն(ե) Շեքերճեան, | 1921-1998, | Վահէ Մ. Շեքերճեան, | 1951-2007:

Ծանոթ. Սարգիս Շեքերճեանը ծնվել է Կեսարիայում (մանրամասն տես՝ **Վարժապետեան Մ.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 292-293):

**ԺԸ**

Աստ հանգչին | Յակոբ Չրաղեան, 1902-1950, | Թաղեոս Մահակեան, 1890-1963, | Ազապի Սամուէլեան, 1878-1971, | Վռամ Սամուէլեան, 1901-1973:

Ծանոթ. Վռամ Սամուէլեանը ծնվել է Թալասում (մանրամասն տես՝ **Վարժապետեան Մ.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 373-375):



**ԻԲ**

Դամբարան | Գաղարճեան ընտանիքի: | Աստ հանգչի(ն) | Էլիաս Էրնէնի, | ծն(եալ) **Կիրիւն**, 1904-1927, | Մարի Գաթարճեան, | ծն(եալ) **Կիրիւն**, 1899-1978:



**ԺԹ**

Դամբարան | Մարտիկեան ընտանիքի, | **առաւնացի**: | Լեւոն Մ. Նորտիկեան, | ծն(եալ) **Առանա**, 15 մարտ 1907, | հ(ա)ն(գեալ) Պէյ(րոթ), 1 հոկտեմբեր 1930, | Սամուէլ Տ. Մարտիկեան, | ծն(եալ) **Առանա**, 1 հոկտեմբեր 1885, | հ(ա)ն(գեալ) Պէյ(րոթ), 10 յունիս 1927: | Յովսէփ Տ. Մարտիկեան, | ծն(եալ) **Առանա**, 22 օգոստոս 1887, | հ(ա)ն(գեալ) Պէյ(րոթ), 13 փետր(ուար) 1927: | Ունայնութեանց աշխարհիս մէջ | մենք ունեցանք յար ելեւէջ, | հեռու բոյնն մեր հայրենի, | այս հողին տակ փտարանդի, | նախամուտին գարնան կ(ե)անքի, | երկու եղբայր եւ մի գարմի, | հայրենիքի կարօտով լի, | նիրհենք այսպէս մենք կողք կողքի:

**Ի**

Աստ հանգչի | Յակոբ Եայլա(յ)եան, | ծն(եալ) ի **Թալաս**, | 1887-1927:

**ԻԱ**

Մեղրակ Հալաճեան, ծն(եալ) **Կեսարիա**, 1869-1947: | Աստ հանգչի(ն) | Արտաշէս Հալաճեան, | ծն(աւ) ի **Կեսարեայ**, 1902 յ(ու)լիս 15, | հանգեաւ 1927 փետ(րվար) 25: | Ունայն է այս կեանք, | օրինեալ ըլլայ | տիրոջը կամք:

**ԻԳ**

Աստ հանգչի | Ծորճ Չորպաճեան, | ծն(աւ) **Այնթապ**, 1901, | մեռ(աւ) Պէյ(րոթ), 1976 | յուլ(իս) 25: | Աստ հանգչի | Մարի Չորպաճեան, | ծն(աւ) **Այնթապ**, 1906, | մեռ(աւ) Պէյ(րոթ), 1973 | հոկտեմբեր 20: | Աստ հանգչի | Զատտոր Չորպաճեան, | ծնեալ | մայիս 8 | 1908, | վախճանեալ | օգոստոս 10 | 1927:

**ԻԴ**

Դամբարան | Ժամկոչեան ընտանիքի: | Աստ հանգչին | Վարդուհի Ժամկոչեան, | 1910-1927, | Յակոբ Ժամկոչեան, | 1880-1954, | ծն(եալ) **Կեսարիա**:



**ԻԵ**

Աստ հանգչին | Ենիգոմշուեան(ներ)՝ | Ստեփան Աղեկ, 1860-1928, | Լուիզա, 1891-1938, | Չաւեն, 1926-1947, | Սարիա՝ ծն(եալ) Սերոբեան, 1870-1956, | Սէյուս՝ ծն(եալ) Կարիկեան, 1892-1957, | Յակոբ, 1883-1974, | Մովսէս, 1892-1976, | Միհրան, 1901-1987, | Վահրամ, 1912-2008, | Գեղարիի՝ | ծն(եալ) Տէր-Սեյրոնեան, 1919-2010: | «Երանի մեռելոցն, | որք | ի տէր ննջեցին»: | Աստ հանգչին(ն) | մահտեսի | Ստեփան Աղեկ | Եէնիգոմշ(ու)եան, | ծն(աւ) ի **Քիլիս**, 1860, | հանգեաւ ի տէր | դեկտ(եմբեր) 10 1928, Պէյրութ, | Մովսէս Աղեկ | Ենիգոմշ(ու)եան, 1893-1976:

**ԻԶ**

Դամբարան | Թիֆլիսնճեան, Խարբուրեան | ընտանիք(ներ)ի, | ծն(եալ) **Ագասարայ**: | Աստ հանգչին | Նեկտար Թիֆլիսնճեան, 1863-1928, | Սակար Թիֆլիսնճեան, 1893-1956, | Եսթեր Խարբուրեան, 1890-1959, | Յակոբոս Խարբուրեան, 1882-1960, | Սահակ Խարբուրեան, 1911-1984:



**ԻԷ**

**Ատանայի** գաղթականներէն | Գազար Աւագեան, | **բարուցի**,| ծնունդ 1865, | մահ 1928 | յունուար 8:

**ԻԸ**

Աստ հանգչի | Սարգիս Յ. Քէտերեան՝ | Տիբունի: | Գաղափարի | անմեռ գոհին, | ի յիշատակ | Ս. Դ. Հնչակեան | կուսակցութիւնը | կը կանգնէ | այս ներշնչարանը: | Փառք եւ յարգանք | տաղանդատր | հռետոր-ճարտասան, | հմուտ | հրապարակագիր, | ազգային | գործիչ, | արժանատր | դաստիարակ, | պայքարող, | սոցիալիստ, | կոչումով | յեղափոխական, | նուիրուած | Հնչակեանին: | Տիբունին է եւ կը մըր/նայ Հնչակեան: | Մեր նուիրումը Ս. | Հայաստանին ակնկալութեամբ չէ, այլ | գաղափարական: | Մեր ընկերային հաւա/տամբն է մարդկութեան | երջանկութիւնը: | Ս. Ք. Տիբունի: | Վատ է ան, որ ճշմարտախօսը լռեցնելու համար | գնդակ կը պարպէ: | Ս. Տ.: | Ծնած է **Միս**, | 27 (ու)նվ(ար) եւ 1898-ին, | անմահացաւ | հայ Կայէններու | եղբ(ա)յր(ա)ս-պ(ա)ն գնդակով, | 17 (ու)նվ(ար) 1929 եւ երեկ(շաբթի)՝ | ժամը 6:30-ին, | Սուրիա փողոց՝ | Պէյրութ: | Աստ հանգչի նաեւ | մայր Տիբունիի՝ | Արմենուիի,

1880-1928: | Միհրան Կարապետի | Աղազարյանին, | 1892-1933, | Երեւան-Քեյրութ: | **Քո** հայրենի հողից | այս մի պատառ քարը | ու քո դատեր սրտից | այս հայախոս գիրը | հայրենիքից հեռու, | հայրենաբաղձ հայր իմ, | թող անմոռաց պահեն | քո հուշն ու պայքարը: | Ազնես 11.10.1966:

Ծանոթ. Ս. Տիբունու մասին տես «Հայրենիք», 1929, № 8 (80), էջ 175: **Քէլչեան Մ.**, նշվ. աշխ., էջ 311-312: **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 458-460:

Միհրան Աղազարյանը ծնվել է Արիստամուն (մանրամասն տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 22-24):



**ԻԹ**

Հայկանուշ Բարսեղեան, | 1883-1928, | օգ(ո)ս-տ(ոս): | Սանդուխտ Պիշիրճիեան, | 1895-1950: | Սարիամ Պիշիրճիեան, | ծնեալ **Այնթապ**, 1868, | հանգ(եալ) 2 մարտ 1948: | Խաչատուր Խաչատուրեան | եւ ընտանիք, | 1884-1945, | Արուսեակ, 1890-1972՝ | ծն(եալ) Պիշիրճիեան, | Ատրիսե, 1912-1981, | Արմէն 1930-1993:

**Լ**

Դամբարան | Տէմիրճեան ընտանիքի: | Աստ հանգչին | Ստեփան Տէմիրճեան, | ծն(եալ) ի **Խարբերդ**, 1907-1928, | Նշան Տէմիրճեան, | ծն(եալ) ի **Խարբերդ**, 1905-1951, | Ժիրայր Տէմիրճեան, | ծն(եալ) ի **Խարբերդ**, 1913-1985, | Ժազին Տէմիրճեան, | ծն(եալ) **Չէլեպի**, 1928-2003, | Պէթի Տէմիրճեան, | ծն(եալ) Պէյրութ, 1951-2004, | Նազէլի Տէմիրճեան | ծն(եալ) Փարթորմեան, **Գոնիա**, 1918-2007:

Ծանոթ. Նշան Տէմիրճեանի մասին տես **Վարժապետեան Ա.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 439-440:



**ԼԱ**

Դամբարան Փանոսեան եւ Խաթունեան ընտանիք(ներ)ի: | Աստ հանգչի(ն) | Յարութիւն Փանոսեան ընտանիքի: | Աստ հանգչին | Յարութիւն | Յ. Փանոսեան, 1927|-1928, | Սիրվարդ | Յ. Փանոսեան, | 1929|-1938, | Արամ Գ. Փանոսեան, 1913-1930, | Հայկազուն Գ. Փանոսեան, 1910-1932, | ծնան **յԱյնթապ**, | Յարութիւն Փ. Փանոսեան, | ծն(եալ) **յԱյնթապ**, 1886, հ(ա)նգ(եալ) 1951:

**ԼԲ**

Գալենիկ Հէքիմեան, | ծնեալ ի **Կ. Պոլիս**, | 1869, | հանգ(եալ) ի Պէյրութ, | օգոստոս 15 | 1929:

**ԼԳ**

Աստ հանգչի | տիկ(ին) Ազնիւ **S. Սէֆէրեան**, | ծն(եալ) **Կեսարիա**, 1880, հ(ա)նգ(եալ) 12 յ(ու)նիս 1929, | Արամ Սէֆէրեան, | ծն(եալ) **Կեսարիա**, 1898, | հ(ա)նգ(եալ) 26 դէկ(տեմբեր) 1949:

Ծանոթ. Արամ Սէֆէրեանի մասին տես **Վարժապետեան Ա.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 397:

**ԼԴ**

Պօղոս Սասերճեան, | դեղագործ, | ծն(եալ) ի **Ատանա**, | 1894-1929:



**ԼԵ**

Շիրիմը | անոնց, որոնք բաց աչքով կապոյտին նայեցան, | անոնց, որոնք ափ սը հողի եւ աղօթքի մըմունչի սը կարօտ մնաց(ի)ն, | անոնց, որոնց ոսկորոտիքը անապատի կիզիչ արեւին տակ փշրուց(ի)ն, | անոնց, որոնք հայրենի հողէն ու զուլալ ջուրէն ի սպառ զրկուեցան, | այն բիրատոր նահատակ հայ որդիներու իբր յուշարձան | կը կերտէ իրենց մէկ արիւնա-ազգակիցը, | 1915-1922, Մարտիրոս Յ. Արթունեան, | 1929:

**ԼԶ**

Դամբարան | Պ. | Ներսէսեան ընտանիքի: | Աստ հանգչի(ն) | Իղարբեր Ներսէսեան, | ծն(եալ) 1852, **Ազշէհի**, հ(ա)նգ(եալ) 1930, | Յակոբ Ներսէսեան, | ծն(եալ) 1896, **Ազշէհի**, հ(ա)նգ(եալ) 1947:



**ԼԷ**

Դամբարան / Պիլլորեան, / Ծոմպարաբեան / ընտանիք(ներ)ի: / Աստ հանգչին, / ծն(եալ) **Ազշեհիք**, / Ֆիլիոր Ծոմպարաբեան, / 1855-1930, / Կատար Պիլլորեան, / 1847-1946, / Կարապետ Պիլլորեան, / 1868-1951, / Վերոնիքա Պիլլորեան, / 1880-1960, / Պողոս Ծոմպարաբեան, / 1885-1980, / Հակոբ Պիլլորեան, / 1914-2002, / Անժէլ Պիլլորեան, / 1922-2006:

**ԼԸ**

Աստ հանգչին / Կիրակոս Աֆարեան, / ծն(եալ) **Կիրիւն**, 1885-1930, / Երանուհի Աֆարեան, / ծն(եալ) **Ազշեհիք**, 1899-1965:



**ԼԹ**

Աստ հանգչի / **այնթապցի** / Երուանդ Պաղտատե(ա)ն, / ծնաւ 1909 եւ կնգեց իր / մահկանացուն ծաղիկ հասակին մէջ, / 31 մարտ 1930: / Շուշան, յասմիկ, վարդ ու մեխակ, / ինձ կեանք տուին կեանք, / բայց վաղահաս օր մը անգութ, / իսամբեցուց զիս երկինքը լուրթ, / ծնողքս, ընկերքս ամեն զատկի, / երբ այցելէն հողակոյտն իմ, / ցաւերս, հոգերս իսկոյն յետին, / կանէանան ու կանհետին:

**Խ**

Միսակ Ալեքսանեան, / ծն(եալ) **Ֆէնէսէ**, 1876-1931, Չահլէ:



**ԽԱ**

Նուիրեալ դամբարանս / Մարիամ Գգիրեանէ / ի յիշատակ իւր աղջկան: / Աստ հանգչին / Աղբիւրաց Գարա(յ)եան` / ծնեալ Գգիրեան, **Կիրիւն**, / 1905-1931, / Մարիամ Գգիրեան, 1885-1956:

**ԽԲ**

Աստ հանգչին / Հմայակ Չափուտեան, / ծն(աւ) ի **Մեփաստիա**, / 1909 մարտ 15, / հանգեալ / 1931 մայիս 7, / եւ եղբայրը / ...:

**ԽԳ**

[Ա]ստ հանգչի / ...ակ Թէվէրէեան, / 1909, **Արապքիք**, / 26 յուլիս 1931:

**ԽԴ**

Նուիրեալ դամբարանս / Մանուշակ Պարունեանէ / ի յիշատակ իւր տղուն: / Աստ հանգչի / Գրիգոր Պարունեան, / ծն(եալ) **Կիրիւն**, 1912-1931:



**ԽԵ**

Աննա Փաշիկեան, / ծնեալ **Խարրերդ**, / մեռեալ 1931 / փետ(րուար) 6:

**ԽԶ**

Դամբարան / Էօճիւրեան ընտանիքի: / [Ա]ստ հանգչին / ..., / ..., / հանգ(եալ) ..., 1931, / Կիրակոս Էօճիւրեան, / ծնեալ **[Ատան]ա**, 1906, / հանգ(եալ) Պէյրութ, / ...8 դեկ(տեմբեր) 1949, / Հովիտա Էօճիւրեան, / ծն(եալ) 1905, **Ատանա**, հ(ա)նգ(եալ) 1954 դեկ(տեմբեր) 4, / Վերժին Չէյթունցեան, / ծն(եալ) **Ատանա**, 1910-1962 ապրիլ 7:





**ԽԷ**

Յակոբճան / Մ. Աթունեան, | 1858-1932: | Կեանքն իրական երկնաբաշխ | տեւէ յաւէտ, | սոսկ ապրումով համերաշխ, | Էֆթիկ Աթունեան, | 1883-1944: | Աստ հանգչին | Մարտիրոս Աթունեան, 1889-1956, | Անի Աթունեան՝ | ծնեալ Պատրիքեան, 1897-1980, | Յակոբ Աշոտ Աթունեան, 1920-2008, | Շաքէ Աթունեան՝ | ծնեալ Սազապետոյեան, 1933-2011:

Ծանոթ. Մարտիրոս Աթունեանը ծնվել է Բորսայում (մասնա-մասն տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 20):

**ԽԸ**

Աստ հանգչին | Ճիւան Թաթրեան, | 1871-1932, | Վերժին Թաթրեան, | 1881-1965(?), | Թագուհի Թաթրեան, | 1926-1972, | Կարպիս Թաթրեան, | ծն(եալ) **Կեսարիա**, 1912-2003, | Մելինէ Թաթրեան՝ | ծն(եալ) Եագուպեան, 1927-2008:



**ԽԹ**

Աստ | հանգչի | Կիլիսիմա Ճանիկեան, | ծնեալ 1880, **Եօզրաթ**, | հանգ(եալ) 1932 | մայիս 10:

**Ծ**

Դամբարան | Միհրանեան, Թերզեան | գերդաստան(ներ)ի: | Միհրան Ս. Միհրանեան, | ծն(եալ) **Կեսարիա**, 1906-1932, | Կիլիզգար Միհրանեան, | ծն(եալ) **Կեսարիա**, 1878-1966, | Մայրենի Թերզեան, | ծն(եալ) **Ֆէնէսէ**, 1882-1967, | Սեդրակ Թերզեան, | ծն(եալ) **Ֆէնէսէ**, 1929-1968, | Երուանդ Թերզեան, | ծն(եալ) **Ֆէնէսէ**, 1908-1972, | Հայկ Միհրանեան, | ծն(եալ) **Կեսարիա**, 1908-1973, | Արաքսի Թերզեան, | ծն(եալ) **Ֆէնէսէ**, 1912-1982, | Նուպար Թերզեան, | ծն(եալ) **Ֆէնէսէ**, 1930-2001:

Ծանոթ. Սեդրակ Թերզեանի մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 133-134:

**ԾԱ**

Աստ հանգչի(ն) | Յովհաննէս Տէր-Հայրապետե(ա)ն, | ծն(եալ) **Ուրֆա**, 1891-ին, | կամաւոր 1917-ին ու մաս/նակցած Արարայի կռուին, | 1920-ի Ուրֆայի հերոսա/մարտին մասնակցած ու | վիրատրուած, | յանկարծամահ Լիբանա/նի | Համմանա գիւղը | 1932-ին, | յիշատակն հերոսաց | օրինեալ ե-

ղիցի: | Բագրատուն Տաւեան, | ծն(եալ) **Ուրֆա**, 1884-1969:

Ծանոթ. Հովհաննէս Տէր-Հայրապետայանի մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 443:

**ԾԲ**

Դամբարան | տէր եւ տիկին Յովհաննէս, Տիգրանուհի | Տէր-Խաչատուրեաններու: | Աստ հանգչին | Նարդուհի Տէր-Խաչատուրեան՝ | ծն(եալ) Կեճեան, **Մայաթիա**, 1904-1932, | Խաչատուր Տէր-Խաչատուրեան, | ծն(եալ) **Մայաթիա**, 1901-1955, | Անահիտ Տէր-Խաչատուրեան՝ | ծն(եալ) Բարդեան, Հալէպ, 1901-1972:



**ԾԳ**

Դամբարան | Փափազեան ընտանիքի: | Սեդրակ Փափազեան, | **Ազէհիթ**, 1878-1933, | Ռէբէկա՝ ծն(եալ) Պոյնուպուրուբեան, | 1891-1944, | Ժիլիլթը՝ ծն(եալ) Նազարեան, | Պէյրուք, 1929-1981, | Օննիկ Փափազեան, | 1915-2007:

**ԾԴ**

Աստ հանգչի | Միհրան Գ. Պասմաճե(ա)ն, | ծն(եալ) **Քիլիս**, 7 յուն(ուար) 1890, | հ(ա)ն(գեալ) Պէյրուք 7 (յունուար) 1933:



**ԾԵ**

Աստ հանգչի(ն) | Թագուհի Քէշիշեան, | ծն(եալ) **Կեսարիա**, 1897, | հ(ա)նգ(եալ) Պէյրութ, 1933, | Յակոբ Քէշիշեան, | 1885-1970:

**ԾԶ**

Ապ(րի) 2, Անթիլաս, տօնին ս(ուրբ) Լուսաւորչի, | պնդեցին ծնողաց տրթալ ուխտի, | [ա]նգութ ինքնաշարժ յանկարծակի | անիւին ոլորեց, առաւ իմ հոգի(ն), | սոյն նկարս թողում (եմ) յիշատակ, | որ քաշուեցանք ժամ մը առաջ, | դպրոցիս կոկոնն էի բացուելու, | ծնողաց յոյսին պատրաստուելու: | Գէորգ Փիլիպոսեան, | հայրս **սեփաստացի**, | ծնայ ի Պասարա, 17 օգոս(տոս) 1928-ի(ն), | աստ հանգչիմ Պէյրութ, | 3 ապրիլ 1933-ի(ն), | թողով ծնողաց | մխիթարիչ ս(ուրբ) հոգի:



**ԾԷ**

Յակոբ Աջապահեան, 1938-1996: | Սահակ Աջապահեան, 1887-1992: | Դամբարան | Աջապահեան ընտանիքի: | Աստ հանգչի(ն) | երիցուհի | Եղիսարեթ Աջապահեան, | ծ(նեալ) 1841, **Միս**, հ(ա)նգ(եալ) 1934, Պէյ(րութ), | հարսը՝ Մարիամ Աջապահեան, | ծ(նեալ) 1895, **Միս**, հ(ա)նգ(եալ) 1935, Պէյ(րութ) | եւ իր թոռնիկները՝ | Գրիգոր Աջապահեան, | ծն(եալ) **Միս**, 1903-1934, | Շաքէ Քէլէշեան, | հ(ա)նգ(եալ) ծաղիկ հասակին մէջ, | 1945-1965, Պէյրութ, | Գարրիէլ Աջապահեան, | ծն(եալ) **Միս**, 1886-1965, | Եղսա Աջապահեան, | ծն(եալ) **Միս**, 1879-1967, | Միսակ Ասիլեան, | 1954-1988:

**ԾԸ**

Աստ հանգչի | հաճի Սարգիս Տ. Սարգիսեան, | ծն(եալ) ի **Տարսոն**, 1880-ին: | Պաշտօնեայ | I(raq) P(etroleum) C(ompany) ընկերութեան: | Չոհ գնաց արկածի, | հոգին աւանդեց | 17 սեպ(տեմբեր) 1934:



**ԾԹ**

Աստ հանգչի | Յարութիւն Գ. Այնճեան, | ծնեալ ի **Սէրսին**, 1882, | հ(ա)նգ(եալ) ի Պէյրութ, 1934 | 12 ապրիլ:

**Կ**

Նուարդ Յ. Կիւլպէնկեան | ծնեալ Կիւտնեան, | 1903-1934: Աստ հանգչի | Յովհաննէս Կ. Կիւլպէնկեան, | ծն(եալ) **Թալաս**, 1884-1971: | Աստ հանգչի | Յովհաննէս Յ. Փափագեան:

Ճանթ. Հովհաննէս Փափագյանը (1882-1957) ծնվել է Ադա-նայում (մանրամասն տես՝ **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 936):



**ԿԱ**

Աստ | հանգչի | Յովհաննէս Քէհայեան, | ծն(եալ) **Արարկիր**, 1903-1967: | Աստ հանգչին | Իսկուհի Քէհայեան, | 1907-1934, | Յովհաննէս Քէհայեան, 1903-1967, | Անժել Յ. Քէհայեան, | 1919-1985, | Անժել Բ. Քէհայեան, | 1936-1988, | Յարութիւն Քէհայեան, | 1914-1998:

**ԿԲ**

Դամբարան | Հէօճէթեան գերդաստանի: | Տիգրան Հէօճէթեան, | ծնեալ | 1908, | **Տօրթօլ**, | անջեալ | 1934, | Պէյրութ, | գրի հանրակառքի: | Ահա մանգաղը մահուան | ձեռքովը կոյր ճակատագրին | հնձեց կեանքըն իմ բողբոջ, | երեկ կեանք մըն էի, | այսօր ափ մը փոշի անկենդան:



**ԿԳ**

Աստ [հանգչին] | Ռուբէն Հ(ա)ճ[ի]-Մ[անուկ]եան, | ծն(եալ) **Եռզրաստ**, ... յուն... 1909, | հ(ա)նգ(եալ) Իժտիդա, 23 օգոս(տոս) 1934, | Չարման Հ(ա)ճի-Մանուկեան, | ծն(եալ) 1862, հանգ(եալ) 1942 մայիս 3, | հաճի Եստէր Մանուկեան, | ծն(եալ) 1900, հանգ(եալ) 28 նոյեմ(բեր) 1946, | Յովհաննէս Հաճի-Մանուկեան, | ծն(եալ) 1882, հ(ա)նգ(եալ) 1953 ապրիլ 29, | Ովսաննա Հաճի-

Մանուկեան, | 1911-1963, | Կիրակոս Հաճի-Մանուկեան, | 1885-1969:

**ԿԴ**

Դամբարան | Էքիզեան ընտանիքի: | Աստ հանգչի(ն) | Յակոբ Էքիզեան, | ծն(եալ) 8 ապրիլ 1926, | հ(ա)նգ(եալ) 13 մայիս 1934: | Ողբս. | Բարդի չար դիպուածը շուտ զգեսնեց զիս, | գարունը կեանքիս զկիսը չունեցած | բաժնեց աշխարհէն ծաղիկ տարիքիս, | ուրը գարուններ հազի բոլորած: | Խաթուն Էքիզեան, | ծն(եալ) 1860, հ(ա)նգ(եալ) 1937: | Պէնոն Ներսեսեան, | ծն(եալ) 1914, հ(ա)նգ(եալ) 1996: | Միսակ Կարապետեան, | ծն(եալ) Միս, 1914, հ(ա)նգ(եալ) 1984: Վեհանուշ Ներսեսեան՝ | ծն(եալ) Էքիզեան, | 1918-2006: | Վերգին Կարապետեան՝ | ծն(եալ) Էքիզեան, 1921-2007:

**ԿԵ**

Դամբարան | Չելվեան-Պէօճէքեան | ընտանիք(ի): | Աստ հանգչին | Արթո Պէօճէքեան, | 1946-1986, | Սկրտիչ Չելվեան, | 1852-1935, | Նշան Մ. Չելվեան, | 1887-1943, | Չապէլ Պէօճէքեան՝ | ծն(եալ) Խարիթեան, | 1901-1960, | Թէֆօն Խարիթեան՝ | ծն(եալ) Չորպաճեան, | 1879-1969:

Ծանոթ. Սկրտիչ և Նշան Չելվեանները ծնվել են Մերսինում (մանրամասն տես՝ **Վարժապետեան Մ.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 114):

**ԿԶ**

Դամբարան | Յ. Գալբազեան ընտանիքի: | Յարէթ Գալբազեան, | **Կեսարիա**, 1853, Պէյրուք, 1935, | Յակոբ Գալբազեան, | **Կեսարիա**, 1880, Պէյրուք 1962, | Չապէլ Գալբազեան, | Պէյրուք, 1899-1965:

Ծանոթ. Հակոբ Գալբազեանի մասին տես՝ **Վարժապետեան Մ.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 67:



**ԿԷ**

Աստ | հանգչի | Խաչիկ Խաչիկեան, | ծնե(ալ) 1860, **Չորրու**, հանգ(եալ) 4 դեկտ(եմբեր) 1935:

**ԿԸ**

Աստ հանգչի(ն) | Տաճատ Գ. Չարիֆեան, | 1860-1935, | Հռիփսիմէ Տ. Չարիֆեան, | 1864-1948, | ծնողը վաղամեղ բանաստեղծ | [Մատթէոս Տ. Չարիֆեանի:

Ծանոթ. Մատթէոս Չարիֆեանը ծնվել է 1894 թ. Կ. Պոլսում (մանրամասն տես՝ **ՀՄՀ**, հ. 3, Երևան, 1977, էջ 669):



**ԿԹ**

Դամբարան | Քիւփեղեան ընտանիքի: | Յարութիւն Քիւփեղեան, | ծն(եալ) **Ուրֆա**, 1866-1935, | Եղիաարէթ Քիւփեղեան, 1878-1965, | տօքթ(որ) Ներսէս Յ. Քիւփեղեան, | ծն(եալ) **Ուրֆա**, 1909, հ(ա)նգ(եալ) Իրաք, 1965, | գրագիտուի | Սիրան Սեզա, | ազգի մը սիրտը կինն է, | ձեռի մը վէմը կինն է, | Պէյրուք, 1973:

Ծանոթ. Սիրան Սեզան (Չարիֆեան-Քյուփեղեան) ծնվել է 1903 թ. Կ. Պոլսում (մանրամասն տես՝ **ՀՄՀ**, հ. 10, Երևան, 1984, էջ 266: **Վարժապետեան Մ.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 510):

Բժիշկ Ներսես Քյուփեղեանի մասին տես՝ **Մահակեան Ա.**, նշվ. աշխ., յտեղում. ուրֆացիներու մարդահամարը էջ 37: **Վարժապետեան Մ.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 510-511:

**Հ**

Աստ հանգչի | տիկին Մարի Գօճակեօզեան, | ծնեալ **Ազշէիր**, 1867, | հանգուցեալ 1935:



**ՀԱ**

Դամբարան | Հայկ, Միքայէլ | Մարտիրեան(ներ): | Նուիրեալ դամբանը | Հայկ Մարտիրեանի կողմէ: | Աստ հանգչի(ն) | Վարդուհի Մարտիրեան, | ծն(եալ) **Մուսա լեռ**, 1870-1935, | Մանուշակ Մարտիրեան, | 1912-1984, | Հայկ Մարտիրեան, | ծն(եալ) Պէյրուք, 1970-1991, | Հայկ Մարտիրեան, 1909-1999:

**ՀԲ**

Դամբարան / Եագուպեան / ընտանիքի: / Աստ հանգչի / Մարիամ Եագուպեան, / ծն(եալ) **յԱտրեան-ման**, 1883, / հ(ա)նգ(եալ) 9 յունիս 1935:

**ՀԳ**

Աստ հանգչի / տիկին Մարիամ / Ե. Անթիքաճեան, / ծն(եալ) **Կիրիւն**, 1885, / հ(ա)նգ(եալ) 25 մարտ 1935:

**ՀԴ**

Դամբարան / Նազարեան եւ Մեֆերեան / ընտանիք(ներ)ի: / Աստ հանգչի(ն) / Կարապետ Մեֆերեան, / ծն(եալ) **Ուրֆայ**, 1885-1935, / Էլիզա Նազարեան, / ծն(եալ) **Ուրֆայ**, 1910-1977, / Լուսիա Մեֆերեան, / ծն(եալ) **Ուրֆայ**, 1894-1980, / Սկրտիչ Նազարեան, / ծն(եալ) **Ուրֆայ**, 1906-1990:

Ծանոթ. Լուսիա Մեֆերյանի և Սկրտիչ Նազարյանի մասին տե՛ս **Մահակեան Ա.**, նշվ. աշխ., յաւելում. ուրֆացիներու մարդա-համարը էջ 37:



**ՀԵ**

Աստ / հանգչի / **հաճընցի** / Կիլենեայ Տումանեան, / 1890-1935:

**ՀԶ**

Աստ հանգչի(ն) / Արմենակ / Քեահեա(յ)եան, / ծն(եալ) **Կեսարիա**, / 1891-1935, / Արամ / Քեահեա(յ)եան, / ծն(եալ) **Կեսարիա**, / 1896-1943, / Փառանձեմ Քեահեա(յ)եան], / [ծն(եալ) **Կեսարիա**, 1900-194..., / Երուանդ Եսայեան, / ծն(եալ), **Կերմիր** ...-1944:

**ՀԷ**

Աստ հանգչի(ն) / Նիկողոս Տիմիճիեան, / ծն(եալ) ի **Գարաման**, / 1899-1935: / Հազիու ողջունած երեսունվեց գարուն, / դեռ չըվայելած կեանքի / փառքն անհուն, / աւաղ, մրրիկը անողորք / մահուան, / խամրեց ու խանչեց մտցուց ի դամբան / խղճալի մօր մէկ

հա/տիկ տղան:/ Այցելու եկեալ ազնի / սիրական, / գիտցիր, որ սուտ է կեանքը, իրա ճան: / Յարութիւն Արթինեան, / ծն(եալ) **Ամանոս**, 1917-1983: / Բիւզանդ Ջէթունցեան, / ծն(եալ) **Կիրիւն**, 1912-1974:

**ՀԸ**

Դամբարան / Վարդանեան ընտանիքի: / Աստ հանգչի / Պետրոս Վարդանեան, / ծն(եալ) **Տարօն**, 1905-1935:



**ՀԹ**

Դամբարան / Միքայելեան ընտանիքի: / Ի յիշատակ մեր սիրելի / ամուսնոյն, հօր, եղբօր, / ազգականին, բարեկամին, / ընկերոջ, կնքահօր, բարերարին, / որդեգրողին, վարպետին / եւ Միքայելեան ընտանիքը վերականգնողին՝ հայ հօր / Աւետիս Կարապետ Միքայելեանի: / Աստ հանգչին / օր(իորդ) Վերժին Միքայելեան, / ծն(եալ) **Պուրսա**, 1913-1935, / տիկ(ին) Աղաւնի Միքայելեան, / ծն(եալ) **Պուրսա**, 1891-1966, / Կարապետ Ա. Միքայելեան, / ծն(եալ) **Կեսարիա**, 1914-1941, / տիկ(ին) Հայկուհի Միքայելեան, / ծն(եալ) **Կեսարիա**, 1915-1988, / Աւետիս Կ. Միքայելեան, / ծն(եալ) **Կեսարիա**, 1939-2005:

**Ձ**

Դամբարան / Գալֆա(յ)եան / գերդաստանի: / Սկրտիչ Գալֆայեան, / ծն(եալ) **Էվէրէկ**, 1909-1988: / Աստ հանգչի(ն) / հայրենակարօս **Ֆենէտցի** / Միրան Գալֆա(յ)եան, 1887-1947, / Պօղոս (Գալֆայեան), 1930-1935, / Վիգորիա (Գալֆայեան), 1924-1942, / Եղիաարեթ Աճէմեան, 1870-1946: / Նրանք հող են դառնում / այս ցուրտ շիրմին տակ, / կարօտօվը մայր հայրենիքի, / ո՛վ անցորդ, աղօթք մը / մըմնջի անոնց հոգոյն: / Վարդան Գալֆա(յ)եան, / ծն(եալ) **Ֆենէտէ**, 1895, հ(ա)նգ(եալ) 1949, / Գրիգոր Գալֆայեան, / 1934-1986: / Ծանոթ. Միրան Գալֆայանի մասին տե՛ս **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 71:

**ՁԱ**

Աստ հանգչին / հաճի Մարթա Շաղալե[ան], / ծն(եալ) **Խարրերդ**, 1849-1936, / տիկ(ին) Եփրաթսի Եսայեան, / ծն(եալ) **Խարրերդ**, 1896-1964, / Ենուկ Եսայեան, / ծն(եալ) **Կեսարիա**, 1885-1968:

Ծանոթ. Ենուկ Եսայանը ծնվել է Կեսարիայի Կարմիր գյուղաքաղաքում (մանրամասն տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 107-108):

**ՁԲ**

Դամբարան / Բարսեղ Գ. Պալեան ընտանիքի: / Աստ հանգչի / տիկ(ին) Արուսեակ Բ. Պալեան, / ծն(եալ) **Կեսարիա**, 6 մարտ 1883, հ(ա)նգ(եալ) 4 մայիս 1936:



**ՁԳ**

Դամբարան / Արմենակ Պաղպուտարեան / ընտանիքի: / Աստ հանգչի / տիկ(ին) Տիգրանուհի Ա. Պաղպուտարեան, ծն(աւ) 1903-ին / **Ատանա**, մեռ(աւ) 1936-(ին) Պէյրոս: / Դա[մբար]րա[ն] / Արմենակ Պաղպուտարեան(ի), / 1863-|...:

**ՁԴ**

Դամբարան / Արմենակ Պէյլերեան / ընտանիքին: / Արմենակ Մ. Պէյլերեան, / ծն(եալ) **Կեսարիա**, 1854-1937, Մայրիցա Պէյլերեան, / ծն(եալ) **Կեսարիա**, 1865-1955, / Գագարոս Ա. Պէյլերեան, / ծն(եալ) **Գռնիա**, 1888-1959:

Ծանոթ. Գագարոս Պէյլերեանի մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 348:

**ՁԵ**

Աստ / հանգչի / տէր / Պետրոս ք(ա)հ(ա)ն(այ) Տէր-Պետրոսեան, / ծն(եալ) **Հասանպէշի**, 1862-1937:

Ծանոթ. նրա մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 454:

**ՁԶ**

Աստ / հանգչին / տէր (և) տիկ(ին) Գարրիէլ Կ. Ազէլիկեան, / ծն(եալ) **Ռոստոք**, 1870-1937:



**ՁԷ**

Դամբարան / Պազալեան ընտանիքի: / Աստ հանգչին / Սարգիս Պազալեան, 1877-1937, / Պետրոս Աշրգեան, 1886-1958, / Զարմայր Քէշիշեան, 1897-1960, / Հայկուհի Պազալեան, / 1882-1966, / Տիրուհի Աշրգեան, 1869-1968, / Սառինա Աշրգեան, 1896-1974, / Բագրատ Պազալեան, 1914-1976, / Վազգէն Պազալեան, 1919-2007, / Սարգիս Պազալեան 1952-2009: / Sarkis P. Bakalian, / 10.01.1952-06.11.2009.

Ծանոթ. Սարգիս Պազալեանը ծնվել է Կեսարիայում (մանրամասն տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 325: **Տղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 933):

Բագրատ Պազալեանը ծնվել է Մերսինում (մանրամասն տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 324-325: **Տղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 957):

Զարմայր Քէշիշեանը ծնվել է Զմյուռնիայում (մանրամասն տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 498-500):

Վազգէն Պազալեանի մասին տես **Տղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 957:

**ՁԸ**

Օննիկ Զարեան, / ծն(եալ) 1936, հ(ա)նգ(եալ) արկածով, 1954: / Սարգիս Գոլեազլեան, / ծն(եալ) **Ազշէհիք**, 1883, հ(ա)նգ(եալ) 1953: / Աստ հանգչի / Գարեգին Սանիսալեան / փեսա Յ. Զարեանի, / ծն(եալ) **Ազշէհիք**, / 1887, / հ(ա)նգ(եալ) 28 նոյ(եմբեր) 1937:

**ՁԹ**

Աստ հանգչին / Արմէն Թափթափեան, / 1900-1937, / Սարգիս Պէրպլերեան, / 1882-1946, / Փայլածու Պէրպլերեան, / 1899-1965:

Ծանոթ. Սարգիս Պէրպլերեանը ծնվել է Երեսիայում (մանրամասն տես **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 1310: **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 352-353):

**Ղ**

Դամբարան / Ճրրճրրեան ընտանիքի: | Բարսեղ S. Ճրրճրրեան, | ծնեալ 1904, **Կեսարիա**, | հանգեալ ի տէր | 14 սեպտ(եմբեր) 1937, | Պէյրուք:



**ՂԱ**

Դամբարան | Մ. Լ. Կ. Մ. Ուղուրեան ընտանիքի: | Աստ հանգչի | Կարպիս Մ. Ուղուրեան, | ծն(եալ) ի **Գարսնան**, 1909, | հ(ա)նգ(եալ) ի տէր ի Պէյրուք, 20 յ(ու)ն(ի)ս 1937:

Ծանոթ. Կարպիս Ուղուրեանի մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 305-306:

**ՂԲ**

Աստ հանգչի | Կ(ա)ր(ա)պ(ե)տ Եարսմեան, | ծն(եալ) 1914, **Չագնազ**, | մահ ի Պէյրուք, | 1937:



**ՂԳ**

Alice Takvor Palandjian, 1928-1990. | Սարիամ Յակոբ Փալանճեան, | 1863-1938, | Mariam Hagop Palandjian. | Թագուր Յակոբ Փալանճեան, | 1883-1973, | Takvor Hagop Palandjian. | Յակոբ Թագուր Փալանճեան, | 1926-1979, | Jacques Takvor Palandjian. | Satenig Garabed Palandjian, | 1893-1981. | Jacqueline Palandjian, 1925-1985:

Ծանոթ. Թագուր Փալանճեանը ծնվել է Չմյուռնիայում (մանրամասն տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 465):

**ՂԴ**

Աստ հանգչի | Ածատուր Էքսէքճե(ա)ն, | ծնե(ա)լ 1870, **Արասքիթ**, | հանգե(ա)լ 1938 22 հոկ(տեմբեր):

**ՂԵ**

Դամբարան | Ժամկոչեան ընտանիքի: | Աստ հանգչին | **Կեսարացի(ներ)** | Սարկարոս Ժամկոչեան, | 1874-1938, | Նազարէթ Ժամկոչեան, | 1902-1982, | Չապէլ Ժամկոչեան, | 1907-1984:

**ՂԶ**

Տէր Միքայէլ ք(ա)հ(ա)ն(ալ) Գոլյումճեան, | ծն(եալ) **Տարսն**, 1883-1938:

Ծանոթ. նրա մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., էջ 89:



**ՂԷ**

Դամբարան Խաչիկեան ընտանիքի: | Աստ հանգչի(ն) | տօքթ(որ) Լուքիկ Խաչիկեան, | ծնեալ 1884 ի **Կարմիր, Կեսարիա**, | հանգեալ 1953 ի Պէյրուք, | տօքթ(որ) Կարապետ Խաչիկեան, | ծնեալ 1890 ի **Կարմիր, Կեսարիա**, | հանգեալ 1938 ի Պէյրուք, | Վահրամ Պէօճէքեան, | ծնեալ 1912 ի **Կեսարիա**, | հանգեալ 1989 ի Պէյրուք, | Հայկուհի Խաչիկեան, | 1905-1992:

Ծանոթ. բժիշկ Կարապետ Խաչիկեանի մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 169:

**ՂԸ**

Աստ հանգչի | Գուրգեն Մ. Շարուկեան, | ծնեալ **Բալու**, 1914, | հանգ(եալ) Պէյրուք, 1938:

**ՂԹ**

Դամբարան | Սէիսեան ընտանիքի: | Աստ հանգչին | Սուրէն Սէիսեան, | ծն(եալ) Հալէպ, 1923, | զոհ Մուրստ գետի, 1938, | Միհրան Յակոբ Սէի-



սեան, | ծնեալ **Էսկիշէիք**, 1897, | հանգեալ Պէյրութ, 1942, | Հրանդ Յակոբ Սէիսեան, | ծնեալ **Էսկիշէիք**, 1906, | հանգեալ Պէյրութ, 1974:

**Ճ**

Դամբարան Գառնիկ Ա. Ուղուրլե(ա)ն | ընտանիքի: | Աստ հանգչին | Սարիսամ Ա. Ուղուրլուեան, | ծն(եալ) **Դալաս**, 1850, | հանգ(եալ) 21 հոկ(տեմբեր) 1939, Պէյրութ, | Գառնիկ Ա. Ուղուրլեան, | ծն(եալ) **Թալաս**, 1877, | հ(ա)նգ(եալ) 7 հոկ(տեմբեր) 1956, Պէյրութ, | Էփրոս Ուղուրլուեան, | ծն(եալ) **Գռնիա**, 1890-1972, | Վահէ Ուղուրլուեան, | ծն(եալ) **Գռնիա**, 1918-1987:



**ՃԱ**

Դամբարան | Թահան ընտանիքի: | Աստ հանգչի(ն) | Լուսիա Քէլպապճեան, | 1862-1939, | Խորէն Թահան, | 1890-1968:  
Ծանոթ. Խորէն Թահանը ծնվել է Եղեւսիայում (մանրամասն տես՝ **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 127):

**ՃԲ**

Շիրմաքարն այս ծնողք, | բեմն է լոկ մահուան, | յիշատակնիդ անուշ, | աւանդ սրբազան, | մեր սրտերուն խոր, | կը մնայ պահուած: | Դամբարան | Սմմիկեան ընտանիքի: | Աստ հանգչին | Սարիսամ Խ. Սմմիկեան, | ծն(եալ) **Ատանա**, 1865-1939, | Էտուար Ս. Սմմիկեան, | ծն(եալ) **Ատանա**, 1888-1950, | Վերժին Ս. Սմմիկեան, | ծն(եալ) **Ատանա**, 1900-1968:  
Ծանոթ. Էտուար Սմմիկեանի մասին տես **Շիլայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 936:

**ՃԳ**

Աստ | հանգչի | Յովհաննէս Ս. Ապաճեան, | ծն(եալ) **Ատանա**, | 1867-1939:  
Ծանոթ. նրա մասին տես **Շիլայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 926:

**ՃԴ**

Դամբարան | Եազմաճեան ընտանիքի: | Վերժին Թուրլումեան, 1916-2008, | Սարի Եազմաճեան, 1910-1983: | Աստ հանգչի(ն) | Գարեգին Եազմաճեան, | ծն(եալ) 1869, **Պոլիս**, հ(ա)նգ(եալ) 1939 յուլ(իս) 4, | Վերժին Եազմաճեան, | ծն(եալ) **Պոլիս**, 1887, հ(ա)նգ(եալ) 1955 դեկ(տեմբեր) 26, | բժիշկ Օննիկ Եազմաճեան, | ծն(եալ) **Պոլիս**, 1895, հ(ա)նգ(եալ) 1960, | Լուիզ Շազարեան, | 1892-1972, | Տիգրան Թուրլումեան, | 1908-1981, | Ազգանազ Եազմաճեան, 1902-1980:  
Ծանոթ. Օննիկ Յազմաճյանի մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 104:



**ՃԵ**

Դամբարան Գօճազաֆա(յ)եան | ընտանիքի: | Աստ հանգչի(ն) | Ռուբէն Գօճազաֆա(յ)եան, | ծն(եալ) **Ազշէիք**, 1870, հ(ա)նգ(եալ) 1939, | Զարուհի Գօճազաֆա(յ)եան, | ծն(եալ) **Ազշէիք**, 1897, հ(ա)նգ(եալ) 1899:

**ՃԶ**

Յովհաննէս Սարաֆեան, | ծն(եալ) **Կե[ս]արիա**, 1874, հ(ա)նգ(եալ) 1939:



**ՃԷ**

Աստ հանգչի | Սկրտիչ Պ. Նազարեան, | ծն(եալ) Ի **Սամաքիա**, 1882, | ննջած ի Պէյրութ, | 17 մարտ 1939:

**ՆԸ**

Աստ / հանգչի / Թադէոս Թաշօ(յ)եան, / ծն(եալ) **Կիրիան**, 1901-1939:

**ՆԹ**

Աստ հանգչի(ն) / Մարտիրոս Սալլազեան, / ծնեալ ի **Մարաշ**, / 24 ապրիլ 1912, / հանգ(եալ) ի Պէյրութ, / 31 մարտ 1939, / Անդրանիկ Սալլազեան, / 1919-1985, / Խաթուն Սալլազեան, / 1927-1996, / Յակոբ Սալլազեան, / 1915-1972, / Michel - Laurice.

**ՆԺ**

Աստ / հանգչի(ն) / Կարպիս Գ. Մարլե(ա)ն, ծն(եալ) 25 յ(ու)նուար 1938, հ(ա)նգ(եալ) 7 մ(ա)յիս 1939, / Աննա Կ. Մարլե(ա)ն, ծն(եալ) **Խարբերդ**, 1880, հ(ա)նգ(եալ) 6 հոկտ(եմբեր) 1941:



**ՆԺԱ**

Դամբարան / Փափազեան ընտանիքի: / Աստ հանգչին / Գուրգէն Բ. Փափազեան, ապրիլ 1939, մոյ(եմբեր) 1939, / Գուրգէն Ն. Փափազեան, **Ալն**, 1888-1959, / Փերոզ Փափազեան, Վառնա, 1876-1963, / Արմինէ Փափազեան, 1918-1998:

**ՆԺԲ**

Աստ / [հ]անգչի / Նեկտար Եադճեան, / **Ազշեհիք**, 1865, հ(ա)նգ(եալ) 1940:



**ՆԺԳ**

Աստ հանգչին / Մարիամ / Սուրբանեան, / ծն(եալ) **Էվերէկ**, 1868, / հ(ա)նգ(եալ) 1940, / Յարու-

թ[ի]ն / Սուրբանեան, / ծն(եալ) **Ֆէնէս**, 1893, / հ(ա)նգ(եալ) 1955:

**ՆԺԴ**

Աստ հանգչի / Կարինէ / Օհանեան, / ծն(եալ) **Կեսարիա**, / 1870-1940(°): / Աստ հանգչի / Մարլէն / Գանթարճեան, / ծն(եալ) Պէյրութ, / 1945-1961:

**ՆԺԵ**

Դամբարան / Չաթալպաշեան / ընտանիքի: / Աստ հանգչին / տիկ(ին) Բերուզ Չաթալպաշեան, / 1876-1940, / Սաթէնիկ Գիրազեան / ծն(եալ) Չաթալպաշեան, / **Պոլիս**, 1895-1961, / Սրբուհի Կարապետեան / ծնեալ Հայրապետեան, / **Տարսն**, 1875-1953, / Արշալոյս Գիրազեան, / 1914-1952, / Վաղինակ Գիրազեան, / 1892-1978:

**ՆԺԶ**

Աստ / հանգչի / Սարգիս Շալվարճեան, / ծն(եալ) **Ուրֆա**, 1888-1940:



**ՆԺԷ**

Աստ / հանգչի / տիկ(ին) Արշալոյս Թօփճեան, / ծնե(ա)լ Գ. Սվաճեան, **Այնթապ**, / 1849-|1941:

**ՆԺԸ**

Աստ հանգչի / Առաքել Բ. Բոլատեան, / ծն(եալ) ի **Կեսարիա**, 1850, / հ(ա)նգ(եալ) ի Պէյրութ, հոկ(տեմբեր) 15 1941:

**ՆԺԹ**

Աստ հանգչին / Յովհաննէս Մերտինե(ա)ն, / ծնեալ 15.6.1876, / հանգե(ա)լ 5.9.1941, / Ֆիլոր Տալարեան, / ծնեալ 13.8.1959, / հանգե(ա)լ 4.10.1941, /

Գրիգոր Պ. Մատարենձ, | ծննալ 1.11.1892, | հանգե(ա)լ | 26.11.1941, | Կարալիս Մերտիներան, | 1913-1963:

Ծանոթ. Կարալիս Մերտիներանը ծնվել է Կեսարիայում (մանրամասն տե՛ս **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 247):

Գրիգոր Մատարենցը ծնվել է Եղեսիայում (մանրամասն տե՛ս **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 1306):

**ՃԻ**

Դամբարան | Մարթա(յ)եան ընտանիքի: | Աստ հանգչին | Դշխոյ Յ. Մարթա(յ)եան, | 1856-1941, | Արմենակ Մարթա(յ)եան, | ծն(եալ) **Սիս**, 1885-1968, | Թագուհի Մարթա(յ)եան, | ծն(եալ) **Սիս**, 1897-1967, | Ջանազ Մարթա(յ)եան, | ծն(եալ) **Սիս**, 1902-1969, | Միսաք Մարթա(յ)եան, | ծն(եալ) **Սիս**, 1890-1969, | Մաքրուհի Մարթա(յ)եան, | ծն(եալ) **Սիս**, 1895-1975, | Արեւ Մարթա(յ)եան, | ծն(եալ) **Սիս**, 1900-1981:

Ծանոթ. Միսաք Մարթայանի մասին տե՛ս **Քելեշեան Ս.**, նշվ. աշխ., էջ 725: **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 240-241:

Արմենակ Մարթայանի մասին տե՛ս **Քելեշեան Ս.**, նշվ. աշխ., էջ 725, 728:



**ՃԻԱ**

Դամբարան | Տանձիկեան ընտանիքի: | Աստ հանգչին(ն) | Կարապետ Տանձիկեան, | ծննալ **Կարին-Էրզրում**, | 1871-1941, | տիկ(ին) Ջարուհի Տանձիկեան, | 1881-1951, | Գեղամ Կ(ա)ր(ա)պ(ե)տ Տանձիկեան, | ծն(ալ) **Պոլիս**, 15.9.1903, | մեռ(ալ) Պէյրուք, 3.5.1984, | Վարդուհի Տանձիկեան, | Թամիսո, 1913-1995, | Անգիմէ Տանձիկեան, | 1908-1999:

**ՃԻԲ**


Դամբարան Տեմիրճեան | Ս. | ընտանիքի: | Աստ հանգչի | Մարգիս Տեմիրճեան, | ծն(եալ) **Ջիլէ**, 1876, հ(ա)նգ(եալ) 1941:

**ՃԻԳ**

Աստ | հանգչի | Եղիսաբէթ Գուգուեան, | ծն(եալ) **Սիս**, 1885-1941:

**ՃԻԴ**

Աստ | հանգչի | Հայկանոյ՝ Տըրտըեան, | ծն(եալ) **Մեքաստիս**, 1886-1941:



**ՃԻԵ**

Աստ | հանգչի | Ներսէս Գարամանուկեան, | ծն(եալ) **Այնթապ**, 1912, հանգ(եալ) 1941:

**ՃԻԶ**

Դամբարան | Առաքել Գարրիլեան ընտանիքին: | Աստ հանգչին(ն) | Աստիկ Ա. Գարրիլեան, | ծնած 29 օգոս(տոս) 1918, **Ատանա**, | հրկիզամահ 16 հոկտ(եմբեր) 1941, Պէյրուք, | Արրահամ Նազարէթ | Գարրիլեան, | 1924-2002:



**ՃԻԷ**

Դամբարան | Կ. Տալո(յ)եան ընտանիքի: | Աստ հանգչին | Կարապետ Տալո(յ)եան, | ծննալ **Այնթապ**, 1863, | հանգեալ 17 յունվար 1942, | Երուանդ Դ. Տալո(յ)եան, | ծննալ Հալէպ, 1940, | հանգեալ 8

մարտ 1945, / Դաւիթ Գ. Տավո(յ)եան, / ծնեալ 1903, հանգեալ 19.7.1987, / Պերճոնի Տավո(յ)եան, / ծնեալ 1913, հանգեալ 14.5.1999, / Լեւոն Կ. Տավո(յ)եան, / ծնեալ 1920, հանգեալ 16.4.2005, / Սոնիա Տավո(յ)եան, 1948-2007, / Ալիս Տավո(յ)եան, 1934-2009:

**ՃԻԸ**

Աստ | հանգչի | Խաչեր Կ. Շալվարճեան, / ծն(եալ) **Ատանա**, 1867-1942:

Ծանոթ. նրա մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 284:

**ՃԻԹ**

Դամբարան | Քերողլուեան ընտանիքի, / **մառաշցի**: Աստ հանգչի(ն) | հաճի Սարգիս | Քերողլուեան, / ծն(եալ) 1870 օգ(ոստոս) 13, / հան(գեալ) 1942 յուլ(իս) 1, / Սողոմոն Քերողլուեան, / 1897-1965: / Դամբարան | Քերողլուեան ընտանիքի, / **մառաշցի**: / Ովսաննա | Քերողլուեան, / 1907-1963, / Պերճոնի | Քէօրոլ(ու)եան, 1938-2008: / Աստ հանգչի(ն) | Վահրամ | Քերողլուեան, / ծն(եալ) **Մարաշ**, / 1899-1971, / Չաւէն | Քէօրոլուեան, / 1931-1986, / Աննա | Քէօրոլուվեան, / 1909-1996, / Յարութիւն | Քերողլ(ու)եան, / ծն(եալ) **Մարաշ**, / 1913-1966:

Ծանոթ. Հարութիւն Զորողլույանի մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 504:

**ՃԼ**

Այս է տապան հանգստեան | տ(էր) Սմբատ ծ(ալրագոյն) վ(ա)րդ(ապետ) Սալպաշեանի` / վանահայր Ս(ուրբ) Կարապետ վանքին, / առաջն(որդական) փոխանորդ Կեսարիոյ, / ծն(եալ) 1874, **Թոմարգա**, հ(ա)նգ(եալ) 14.2.1942: / Ասացէք աստուած ողորմի, / եւ | աստուած ողորմեսցի Չեզ:

Ծանոթ. նրա մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 368-369:



**ՃԼԱ**

Աստ հանգչի | Ասատուր Գառաճեան, / ծն(եալ) **Իզմիլ**, 1877, / հ(ա)նգ(եալ) 1942:

**ՃԼԲ**

Աստ հանգչի(ն) | Յարութիւն Շալվեան, ծն(եալ) **Տօրթեօլ**, / 1880-1942, / Եղիապէթ Շալվեան, ծն(եալ) **Տօրթեօլ**, / 1888-1972, / Յակոբ Շալվեան, ծն(եալ) **Տօրթեօլ**, / 1910-1984:

Ծանոթ. Հարութիւն Շալվեանի մասին տես **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 290:



**ՃԼԳ**

Մաննիկ ճիկերճեան, / ծն(եալ) **Պոլիս**, 1881(°), հ(ա)նգ(եալ) 1942:

**ՃԼԴ**

Աստ հանգչի | հ(ա)ճի Սարգիս Դաբէսեան, / ծնեալ **Հանըն**, 1883, / հ(ա)նգ(եալ) 1942 օգոս(տոս) 26:



**ՃԼԵ**

Դամբարան | Նազարէթ Մատաղճեան | ընտանիքի: / Աստ հանգչի | Նազարէթ Մատաղճեան, / ծնեալ **Թոմարգա**, 1889, / հանգեալ Պէյրուք, 17.3.1942 | եւ ննջեցելոց | Օննիկ Մատաղճեան, 1950, / Սեդա Մատաղճեան, 1977, / Կիլլի Մատաղճեան, 1991, / Յարութիւն Մատաղճեան, ..., / Արամ Ն. Մատաղճեան, 1928-2013:

**ՃԼԶ**

Աստ հանգչի | Մարիամ Տէր-Յակոբեան` / ծնե(ա)լ Ա. Արշակեան, / **Կէվար**, **Կէրփիլ**, 1902, / հանգ(եալ) Պէյրուք, 1942:

**ՃԼԵ**

Յովհաննէս Նիշանեան, | ծն(եալ) **Մերսին**, 1913-1942:

**ՃԼԸ**

Աստ | հանգչի | Արտավազդ Սրինկոյեան, | ծն(եալ) **Ատանա**, 1914-1942:

Ծանոթ. նրա մասին տես՝ **Վարժապետեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 414:



**ՃԼԹ**

Աստ հանգչին | Վարդգէս Թիֆլիսեան, | ծն(աւ) 1923, մահ(ացաւ) 1942, | Մարտիրոս Թիֆլիսեան, | ծն(աւ) **Կարին**, 1887, մահ(ացաւ) 1953, | Արմենակ Գարակէօզեան, | ծն(աւ) **Օրտու**, 1910, մահ(ացաւ) 1993:

**ՃԽ**

